

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մայր Աթոռիս Դիւանը լիազօրուած է հաղորդելու՝ Հայ Առաքելական Եկեղեցու նուիրապետական Աթոռներին, թեմական-եկեղեցական կազմակերպութիւններին, հայ մամուլին և համայն հայ հաւատացեալ ժողովրդին, թէ Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա Հայրապետը դիմումնագրեր է ուղղել Եւրոպական Պառլամենտի նախագահ Նորին Գերազանցութիւն Լորտ Փլամփ Քոլշիլին և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար Հայր Էմիլիօ Կաստրոյին, առաջադրանքով, որ նրանք իրենց միջազգային բարձր դիրքերից պաշտպան հանդիսացան 1915—16 թուականներին Արևմտեան Հայաստանում տեղի ունեցած հայոց ցեղասպանութեան ճանաչման միջազգային մակարդակի վրայ։

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
16 մայիս 1987 թ.